

20.878

5227

ԵՎՐՈՍԵԼ ԳԵՂԱՑՄՈՒՆ



Cestapo

ՅՐԱՅԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՊԴՐ-Ի
• ՀԱՅԱՍՏԱՆ • ԿԵՆՏԿՈՎԻ

329.18
4-62

329.18

L-62

Ե. ՎԻՆԿԵԼ

115 JAN 2010
5 FEB 2007

Գ Ե Ս Ա Պ Ո

1977X

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈՂԲ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏԿՈՒՄ
օԵՐԵՎԱՆ

1939

Պատ. Խմբագիր՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թարգմանիչ՝ Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ
Շապիկը՝ Ակադիք. Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ
Սրբագրել՝ Ս. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Ս Ր Ա Զ Ա Բ Ա Ն

Գերմանական ֆաշիզմի տիրապետության յերկու տարում՝ «Գեստապո» բարը խիստ հայտնի դարձավ։ Գերմանական գաղտնի վոստափկանության հռչակը նսեմացրեց մյուս կապիտալիստական յերկրների բոլոր գաղտնի վոստափկանությունների փառքը։ Անհասկած և, վոր պատմության մեջ Գեստապոն ավելի ականավոր տեղ կդրավի, քան ոռուսական ցարիզմի տիրահռչակ պահնորդական բաժանմունքը։

Գեստապոն գործում և վոչ միայն Գերմանիայում, այլև նրա սահմաններից գուրս։ «Գեստապո» բառի հետ կապված են վոչ միայն Գերմանիայի համակենտրոնացման ճանբարներում տեղի ունեցող գաղանությունները, կալանավորների տանջանքները, բանտարկյալների սպանությունները «փախչելու փորձ կատարելիս», այլև ուրիշ շատ բան, վոր կատարվում և Գերմանիայի սահմաններից գուրս։ Աշխարհում չկա մի պետություն, ուր չգործեն Գերմանական գաղտնի վոստափկանության գործակալները։ Եվեցարիայում ու Ֆրանսիայում, Անգլիայում և Իտալիայում, Եյպեն-Մալմեդի կոչված Բնոլգիական մարդում, Դանիական հյուսիսային Շլեզվիգում, Ավստրիայում, Զեխուլովակիայի շրջաններում, Մերձ-Բալտյան յերկրներում, — ամենուրեք մենք գտնում ենք Գեստապոյի չարագուշակ աշխատանքի հետքերը։

Զեխո-Սլովակիայի սահմանամերձ մի քաղաքում հիվ սպանեց եմիգրանտ ինժեներ ՌՈՒԴՎՈԼՖ-ՖՈՐՄԻՍին։ Ո՞վ սպանեց ավանդության ՔԵԼԼին, վորը Ռայխստագի հրկիզումից հետո Գերմանիայից փախավ Ավստրիա և սպանում եր մերկացնել հրձիկներին։ Ո՞վ եր նացիոնալ-սոցիալիստ տեսորիստներին համախմբում Մեմելում։ Ո՞ւմ արարքները մերկացվեցին այն ժամանակ, յերբ Չուանասում (Կովսո) տեղի յեր ունենում արդ բանդիտների զատավարությունը։ Ո՞վ առեանգեց և Բաղելից Գերմանիա փախցրեց հեղափոխական ժողովներու ՅԱԿՈԲԱՅԻՆ, վորն ամբողջ աշխարհին իրազեկ եր դարձնում Փաշիստական Գերմանիայի ուղղմական պատրաստությունների մասին։



38/63-12

Պետհրատի աշարան. Յերեվան

— Դարձյալ և դարձյալ «տմբնուրեք գտնվող և ամենազոր» այդ Գեստապոն, Նրա տղամադրության տակ գտնվում են մի- լիոնների հասնող ֆոնդեր, վոր բաց են թողնում գերմանական պրոպագանդի մինիստրությունն ու գերմանական ռազմական հետախուզությունը:

Գերմանական գաղտնի վկասիկանությունն իր այս կամ այն գոհին սպանելու համար հատուկ գահիձներ և ուղարկում, վորոնց սպանությունը կատարում են ատրճանակներով ու դաշտույններով, վորտեղ ել հարմար ե՝ թունով։ Այդ գահիձներն եյին, վոր Լոնդոնում թունավորեցին հակաֆաշիստ վտարանդի ֆԱԲԻՆին և ՎՈՒՐՄին։

Մարդասպաններն ընտրվում են հենց այն մարդկանցից, վորոնցով անմիջականորեն չրջապատված են Հիտլերը և Գյորին։ Այդ մարդասպանները Փաշիստական զինվորականության ներկայացուցիչներն են, «բարձր» զասակարգին պատկանող յերիտասարդ կանայք ու տղամարդիկ, վորոնք գործում են մարկաներով, Փունտ-ստերլինգներով ու դոլլարներով գնահատվող «ազգասիրությունից» դրդված, դրանք մուլտ անձնավորություններ են, վորոնք հիմա վխառում են Փաշիստական դիկտատորայի պալբատական աջխարհում, դրանք սուս-սպիտակ-գվարդիականներ են, վոր, հանձին Հիտլերի, մի նոր առատաձեռն տեր են զտել Դրանք սովորությն յեփրոպական մի ջարք յերենիներում, ապաստան գտնում գերմանական բազմաթիվ վտարանդիների մէջ։ Նրանք կազմում են իրենց գոհերի «սև ցուցանակները» զրազվում փաստաթթերի ու համակների գողությամբ, կհղծ թղթեր կազմում, լրագրեր կաշառում։

ԳԵՍՏԱՊՈՅԻ ԴՈՒՇՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՁԱՇԽՉՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԻ ԿՈՂՄԻ Ե

Թիկունքում՝ ձեռնարկություններում նա համառորհն հետեղում և բանվորներին, աշխատում անբարեհույս մարդիկ հայտնարերեւ Նրա գործնեյությունն ուղղված ե գլխավորապես գերմանական հերոսական կոմիտսակցության դեմ, վորն իր մարտական զրականությամբ հեղեղում և գործարանները և մասսաներին մորիլեղացիայի յենթարկում Փաշիզմը տապալելու համար։ Սահմանների վրա նա կատարում ե դիվերսիոն գործողություններ, հետևում ե սահմանամերձ բնակչության տրամա-

գրություններին, մի ջարք յերկրներ և ուղարկում «իր» մարդիկը, գրականություն ու գենք։

Ոտար յերկրներում, — առաջին հերթին այն յերկրներում, վորոնց վրա սազմատենչ Փաշիզմն աչք և անկել, Գեստապոն առեղծում և Փաշիստական փորպուներ, իբր թե սպորտային և տուրիստական միություններ, գործազուրկների համար բարեգործական կազմակերպություններ, «Կուլտ-կրթական» և այլ միություններ։ Այդ ամրող գործակալությունը հենց միայն ազգանշան և սպասում ԲԵՇԼԻՆԻՑ, վրակեսզի կազմակերպի արյունուտ ընդհարումներ, «Հեղաշրջման փորձեր»-ի պրովակցիաներ և այն, առիթ ստեղծի հեղափոխական պրոլետարական կազմակերպությունները ջախջախսն լու — բանվորական մտառաների հետ իր հաջիվը մաքրելու համար։

Ամբողջ աշխարհի նաև Խորհրդային Միության աշխատավորները պետք ե իմանան Գեստապոյի մասին։ Հարկավոր և յեռապատկել զգաստությունը, աշալուրջ հետևել վոր Փաշիստական բանդիտների կողմից ուղարկված վորեե մեկը չսողոսկի մեր աշխատանքի վորեե բնագավառը, չկազմակերպի սաբուտաժ, վնասարարություն և տեսողիստական ակտեր։

Ներկա բրոշյուրը հաստարակված և Շվեյցարիայում՝ գերմաններեն լիդվոլի Գրված և այն մարդու ձեռքով, վորն ինքն և ապրել Գերմանիայի Փաշիստական զնդանների բոլոր սարսափները և պատճում ե այն, ինչ տեսել ու լսել ե Գեստապոյի արյունուտ աշխատանքի զոհերից։

Այս բրոշյուրը գեռ լիովին չի լուսաբանում Գեստապոյի աշխատանքը, սակայն նույնիսկ այն նյութերը, վորոնք տրվում են այստեղ, զաղափար են տալիս Փաշիստական գաղտնի վուսիկանության հրեշտակության համար չարագործությունների և այն խնդիրների մասին, վոր գերմանական Փաշիզմն առաջազդել և այդ վուսիկանության։

Հ. ԲԵՇՆԱՐ

«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ» ԳԱԼՏՆԻ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՐԻ ՖԱՇԻՍՏԱԿԱՆԸ

Գեստապո—Գերմանիայի պետական գաղտնի վոստիկանության կրծատ անունն է: Վերջին ժամանակներու ժողովուրդն այդ հիմնարկությանը մի ուրիշ «Գետական խորհրդավոր վոստիկանություն» չիշտակի անունն է տվել: Յեզ իսկապես՝ Գերմանիայում, առավել ևս արտասահմանի մարդկանց մեծամասնության համար Գետապոյի եյտությունն ու գործնեյտիյունը գաղտնիքի թանձը ծածկոցով են ծածկված: Այժմ այդ ծածկոցն ամբողջովին հետ տանելը գեռեսս դժվար է: Գերմանական ֆաշիզմի հաղարավոր զոհերը հնարավորություն ունեյին իրազեկ լինել Գետապոյի աշխատանքին, սակայն գրեթե վոչ վոքի չհաջողվեց թափանցել նրա գաղտնիքների մեջ:

Աշխատավորների լայն մասսաները խորն ատելություն են տածում զեպի Գետապոն: Մյուս կողմից Գետապոյին բարեհաճ վերաբերմունք են ցույց տալիս արդյունարելողները, խոշոր հոգատերերը, բանկիրները: Գետապոն նրանց գենքն է: Ամեն տեղ, ուր բանվորներն ու մանը ծառայողները զուրս են գալիս հետզետե խորացող աղքատության ու կարիքի դեմ, Գետապոն ասպարեզ և գալիս: Ամեն տեղ, ուր քայլայված մանը գյուղացիները և ցիրորդ կայսրությունը հիմասթափված տնայնագործները համարձակվում են դժգուություն հայտնել և տրտնջալ, Գետապոն պատրաստ և կանգնած: Ամեն տեղ, ուր ինտելիգենտը, Գերմանիայի ծանր ու ազգական ինդուստրիայի ասպետները «Նացիոնալ-սոցիալիզմի» մասին չծաղկացրած ճշմարտության մի խոսք են ասում, նրան լուցնելու համար Գետապոն մեխողներ և գտնում: Գերմանիայում Գետապոն նորամուծություն չի: Այն միայն վերակառուցված է, և նրա լիազորություններն ընդարձակված են: Պետական գաղտնի վոստիկ անությունը գոյություն ունեն կայսերական Գերմանիայում, զոյություն ունեն նաև «գեմոկրատիայի» ժամանակ, յերբ Փաշիստները պետական

բուրժուազիայի սոցիալ-դեմոկրատ հավատարիմ լակեյներին պաշտոններից հեռացրին, «պետության թշնամիների» պատրաստի ցուցակներն ու քարտարկելը գտան:

«Դեմոկրատական» Գետապոն, վորն այն ժամանակ կոչվում եր «1—Ա. բաժանմունք» արդեն 1933 թվականի փետրվարի 28-ի առավոտը, ույլատապի հրդեհից հետո, Փաշիստներին նյութեր են մատակարարում՝ «գետության թշնամիներին» առաջին հարվածը հասցնելու համար: Բանից զուրս յեկավ, վոր միայն կոմունիստներին չեր, վոր «դեմոկրատիկ» ուրանկան ցուցակագրում եր իբրև պետության թշնամիներ «1—Ա. բաժանմունք» քարտարկեներում կային նաև սոցիալ-դեմոկրատ ոպողիցիոն բանվորների ու ծառայողների և ոպողիցիոն տրամադրություն ունեցող բուրժուական ինտելիգենտների անունները: Այդ քարտարկեները կիրառվել եյին համաձայն ներքին գործերի դեմոկրատ և սոցիալ-դեմոկրատ մինիստրների ու վոստիկանապետերի առաջարկությունների:

Պատահական չե այն փաստը, վոր նույնիսկ Փաշիստներն իշխանության գլուխ անցնելու առաջին շրջանում, 1933 թվականի վետրվարի 28-ից հետո տեղի ունեցավ արևունու տեսողի ամենավայրագ խրախճանքի ժամանակ, նախկին սոցիալ-դեմոկրատ վոստիկանապետ Յերֆիբելը վոչ մի հալածանքի չենթարկվեց: Վորպես ՔՅՈԼՆԻ, ԲԵՌԼԻՆԻ ու ԳՈՐԴՄՈՒՆԻՒՐ վոստիկանապետ՝ Յերֆիբելը իր պարտականությունները կատարում եր այնպես, ինչպես կապիտալիստական Գերմանիայի շահերն եյին պահանջում: Այս պատճառով Փաշիստները հեղաշրջումից հետո վոչ միայն չանհանգստացրին նրան, այլև կենաքթոշակ տվին, և հիմա Յերֆիբելը «յերրորդ կայսրության» թոշակառուի հանդիսատ կյանք և վարում: Գերմանական բուրժուազիան վարձատրում է նրան հավատարիմ ծառայության համար:

Սոցիալ-դեմոկրատներից միայն Յերֆիբելը չե, վորը հընչուն դրամով վարձատրություն և ստանում: Ել չխոսնեք արյունաբերություն ՆՈՍԿԵՅԻ մասին, վորը հաշակվեց 1919 թվականի հունվարին, Գերմանական հեղափոխական պրոլետարների գեմուղղված իր գաղանություններով, վարձատրություն են ստանում բուրժուազիային հավատարիմ մի շարք ուրիշ — սուիալ գեմոկրատ պարագաներուն: Հիմլերը նրանց վարձատրում է աշմենից առաջ իրեն յերախտագիտություն — այն բանի համար, վոր նրանք կարողացան գեմոկրատիայով քողարկել և վոչ միայն

կապիտալիստական հայրենիքն ապահովել պրոլետարական հեղափոխությունից, այլև միանգամայն պետքական վիճակում պահել բուրժուական իշխանության վողջ ապարատը, նաև Գետապոնն:

Կայսերական Գերմանիայում Գեստադուն կից և Բեռլինի «թագավորական վոստիկանատանը», 1918 թվականի նոյեմբերին, յիրք բանվորներն ու նավատիները գրոհ տվին ու գրավեցին, «թագավորական վոստիկանատունը», զբախտարար սահմանափակիցին միայն համազգեստ հագած վոստիկաններին զինաթափելով՝ նրանք չհասան մինչև քաղաքական գաղտնի վոստիկանություն։ Այդ բաժանմունքի գերը այն ժամանակ լավ հայտնի չեր նրանց։ 1918 թվականի հեղափոխական որերին քաղաքական գաղտնի վոստիկանությունը կարողացավ թագնվել լավ պաշտպանված գաղտնի անկյուններում։ ԿԱՎԱԼԵՐՓԱՌԻՆԵՐի հրաժանաձգ գիվիգիան քաղաքական գաղտնի վոստիկանությանը բարականաչափ պաշտպանեց, զոր վերջինս կարողանա ԱՆԱՐԴԵԼ շարունակել իր գործունեցությունը։

Ապագայում, յիրք գերմանական պրոլետարիատը հնարանություն կունենա լիովին պարզել այն որերի գեղաքերը, անտառ հիաստատիի, զոր ԿԱՎԱԼ լիքինեինի, ՌՈԶԱ ԼՅՈՒՔՍԵՄ-ԲՐԻՇի, ԼԵՈ ՅՈՒԳԻՆԵՍԻ և պրոլետարական հայտնի ու քիչ հայտնի այլ մարտիկների, բազմաթիվ հեղափոխական բանվորների ու նավատիների սպանությունները կատարված են քաղաքական գաղտնի վոստիկանության ուղղակի մասնակցությամբ։

1918 թվականի նոյեմբերյան որերից հետո քաղաքական գաղտնի վոստիկանությունը վերատին որինականացավ սոցիալ-դեմոկրատիայի ձեռքով, — Բեռլինի վոստիկանապետ ՎԱԲԻՏԵԲ ՌԻԵՏԵԼ վերականգնեց այն վերջինս գործում եր Պրուսիայի կառավարության հովանավորությամբ, իսկ այդ կառավորությունը բաղկացած եր բացառապես սոցիալ-դեմոկրատներից։ Նախկին «թագավորական գաղտնի քաղաքական վոստիկանության» վեկավար աստիճանավորները, վորոնք նոր իրավակարգն «ընդունեցին» մեջին իրենց տեղերում։ Միայն պետական գաղտնի վոստիկանության միջին ապարատը կառավարությանը հավատարիմ մի քանի սոցիալ-դեմոկրատ ընդունվեցին։ Ճիշտ եր իրեն գործակալներ ու հսկողներ մեծ թվով նոր մարդիկ ելին ոգտագործում, բայց հիմականում ապարատը մնում եր հին կազմով։ Յերբ քաշիստներն իշխանությունը գրավեցին, բուր-

ժուական «դեմոկրատիայի» շրջանի գաղտնի վոստիկանության ղեկավար չինովնիկները մնացին իրենց տեղերում։

Ինչպես կայսերի տիրապետության, այսպիս ել «դեմոկրատիայի» ժամանակաշրջանում Գեստադուն կապիտալիստաների ձեռքում մի սուր զենք եր ժողովրդական մասսաներին ձնշելու համար։ Գերմանական բուրժուազիոն այդ զենքով հարվածել և հարվածում ե վոչ միայն կոմունիստաներին, այլև բոլոր նրանց, ում չի կարողանում իր խոնարհ ծառան դարձնել։ 1933 թվականի փետրվարի 28-ից հետո մի առանձին խայտարգետ պատկեր ելին ներկայացնում Բեռլինի վոստիկանատանը կից՝ Գետապոյի շենքը և քնչական բանտի կոմերները։ Բնակչության բոլոր խավերից ել այստեղ զոհներ կալին։ Նրանց մեծ մասը ցուցակագրված եր Գեստադուն կապիտալիստանությանը բաժնում։

Ֆաշիստների անելիքը բարդ չեր — հարկավոր եր միայն ցուցակագրվածներին բերելու կարգադրություն անել։

ԻՆՉ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ԳԵՍՏԱԴՈՅԻ ՆԵՐՍԸ

Այն հարցին, թե ինչ է կատարվում Գետապոյի ներսը, կարելի յեր կարճ պատասխանել — ամեն տեսակ սարսափներ, ամեն տեսակ գաղանություններ ու նողկանքներ, վոր կատարվել են ժողովրդական մասսաներին ձնշելու համար, սկսած ցարական պահնորդական բաժանմունքի գործադրությամբ, մինչև գտղությային աշխատավորության ճորտացման և ստրկացման խմբերի լիստական մեթոդները։ Սակայն «քաղաքակիրթ» Գերմանիայի գաղտնի վոստիկանության մեթոդներն ել ավելի մասնամատան լուսարանություն կարիք ունեն։ Գետապոյի ֆաշիստ տերերը փորձում են բոլոր սպանությունների, բոլոր գամանությունների ու տանջանքների մեջ զցել «ստորագուս որդանների» ստորին աստիճանավորների վրա։ Սակայն 1933 թվականի փետրվարի 28-ից հետո ներումն շնորհելով ֆաշիստական բոլոր հանցագործությունների համար՝ նրանք իրենց գիմակը պատսեցին։ Այդ ակտով նրանք վողուոք հետագա չարագործությունների թույլովություն ու գործողությունների ազատություն տվին կինամոնագույն, ու ու կանաչ տարագ հագնող մարդասպաններին ու հրաշներին իհարկե առանց այդ ներման ել վոչ մի մազ չեր պակասի «ստորագրյալների» գլուխց։ Գետապոյի դահիճների

հանցագործությունները փաստորեն յերբեք չեն դադարել: Յեզ ղրանք չեն դադարի, քանի դեռ Գերմանիան կառավարում են սազմական և ծանր արդյունաբերության մակնատների, խոշոր հողատերերի, բանկային իշխանավորների լիազորները: Այստեղ մենք կփորձենք ցույց տալ, թե «ստորադաս որդանների» հանցագործությունները վորչափ սերտ են կապված Գեստապոյի հետ:

Գեստապոն իր բոլոր նախաձեռնությունները կիրառում են սպառագինված, մարտական զորամասերի միջոցով: Նրա հիմնական մարտական ջոկատը — այդ Հատուկ հանձնաւարությունների պահնորդական վոստիկանական զորամասն եւ: Նա կազմակերպվել եղեւ «գեմոլիրատիայի» ժամանակը, նրա հիմնադիրներից մեկն այն ժամանակվա Պրուսական ներքին գործերի մինիստր Զեվերին Գն եր: Ֆաշիստների ժամանակ այդ զորամասի հրամանատար մասց Զեվերին Գի ժամանակվա հրամանատար՝ ԱՅՑԵՆԱՆ ՎԵԿԵՆ: Հատուկ հանձնարարությունների զորամասն ընտրովի մարդկանցից երազկացած, վոստիկանական ընդհանուր ծառալության համար պիտանի ամեն մի մարդ չի կարող հատուկ հանձնարարությունների զորամաս ընկներ Միայն նա յե հարմար համարվում, ով պատրաստ ենոգուտ ձեռնարկումների շահերի, առանց հետ նայելու անցնել հեղափոխական բանվորների դիակների լեռների վրայով:

Գեստապոյի գործներությունը յերբեմն պահանջում են հատուկ հանձնարարությունների այդ զորամասը լրացնել կինամոնագույն կամ սկ տարագ հազնող նացիոնալ-սոցիալիստական հրոսակներով: Այդ հրոսակներն սկզբում պաշտոնապես կոչվում եյին «Ոժանդակ վոստիկանություն»: Հետո այդ անունը չքացավ: Ոժանդակ վոստիկանությունը պաշտոնապես արձակվեց, սակայն բանդաները և ամենից առաջ, Գեստապոյի բանդիտիզմը մնացին իրենց տեղում: Գեստապոն իր ձեռնարկումներն այդ զորամասերի ոգնությամբ եր կիրառում, կարճ հրացաններով, ատրճանակներով, ուետինե մահակներով, մինչև ատամները վինված ֆաշիստական հրոսակները աներ ու ամբողջ թաղեր են շրջապատում ու հետո սկսում իրենց վայրագ գործողությունները:

Այդ հարձակումների ժամանակ քիչ մարդ չի սպանվել վիրավորվել, հազմացել, ու ծեծվել: Ֆաշիստական հրոսակները չեն խնայում վոչ ծերերին, վոչ ել կանանց ու յերեխաններին:

Քանի քանի կին դաժման խոշտանգումների յեն յենթարկվել միայն նրա համար, վոր չեյին կարող հայտնել, թե ար ըովելիս

ուր են իրենց ամուսինները, վորոնք կասկածվում են «վեստակար» մտածելակերպի համար:

Քանի քանի անգամ ֆաշիստական հրոսակները ցինիկարաբ խուզարկել են կանանց և սպատրվակ բաներով, վոր իրը թե կանայք շրջագգեստի տակ արգելված գրականություն են թագցնում, քաշել հանել են նրանց ամբողջ հազուստն ու թողել բոլորվին մերկ: Իսկ յեմե այդ կանայք հետո բողոքում եյին վոստիկանական թաղամասին, հետեյալ կարծ պատասխանն եյին ստանում, — «մենք այդպիսի կարգադրություններ չենք արելու: Մի տեղ միայն Գեստապոյում այդ արարքների մասին լավ գիտեյին»:

Գեստապոյում ջատ լավ հայտնի յեն այս կամ այն մարդու հանկարծակի չքացման պատճառներն ու հանգամանքները: Այնտեղ հրաջալի կերպով զիտեն, թե ում ձեռքով և ինչպես իրենակարանում սպանվեց կառավարության այս կամ այն «թշնամին»:

Այն մասսայական սպանությունները, վոր Գեստապոն ու իրեն պաշտպան ջոկատները կատարեցին 1934 թվականի հունիսի 30-ին, առանձնապես պարզ ցույց տվին Գեստապոյի ելությունն ու կոչումը: —

Ծանր արդյունարերության արքաները հրամայում եիին Հիմլերին, իսկ գաղտնի վոստիկանությունը հնազանդում ու կատարում եր: Ապշեցուցիչ շտապովականությամբ սպանվեցին զրոհային ջոկատների ղեկավարները՝ Ռեմլ, ԵՌՆՍԸԼ և հարյուրափոր հեղափոխականներ: Ագովելով հարմար մոմենտից՝ Գեստապոն աշխատեց միաժամանակ մաքրել նաև իր մյուս հակոռակորդների հաշիվը, ինչպիսին են գեներալ Շլեթիներլ, ԿլՈՐԻՄՆԵՐԼ և այլն:

Գեստապոյում շատ լավ գիտեն, թե ինչ են նշանակում «ինքնասպանություն» բառը, յերբ խոսքը վերաբերում է ձերբակալվածներին կամ ֆաշիստական հրոսակների ձեռքն ընկած մարդկանց: Յերբ անչափահամներին իրենց մայրերի աչքի առաջ վերին հարկերի պատռհաններից նետում եյին սալահատակի վրա, այդ Գեստապոյի լեզվով կոչվում եր «ինքնասպանություն՝ ձերբակալման յերկուղից ստիպված»: Յերբ կալանավորին զցում եյին լուսամուտի գոգն ու պրզպատե ճիզուններով, մտրակներով ու ուետինե մահակներով ծեծում այնքան, մինչև վոր նա խելակորույս ներքե եր նետում, այդ նույնպես «ինքնասպանություն» եր կոչվում:

Յերբ զոհին քարշ եյին տալիս սանդուխքի վրայով, վոտնե-

թից բռնած կամ պարկի մեջ դրած կտիսում եյին ու դարձնում հրաշգության վարժությունների նշանակ, այդ համարվում եր անմեղ զվարճություն: Ապա այդ «զվարճություն երից» հետո կենդանի մասցածներին հանձնում եյին գրուայիններին՝ գրուային ջոկատների նկուղներում հետագա «մշակման» յենթարկելու համար: Բացի փոքր նկուղներից, վոր գրեթե ամեն մի փողոցի վրա կան, հարմարեցված ելին նաև միքանի հատուկ շենք, վորտեղից խոշտանգվողների հառաջանքները վոչ վոք չեր լուսում, բացի ֆեստապոյի զահիճներից: Պատմության մեջ մտած այդպիսի կենտրոնների շարքը բեռլինում դասվում են՝ «Ուլուպ» կոչված զվարճության այլին՝ Լեռտեր կայարանի մոտ, առգմական վարչության նախկին շենքերը, գեներալ Պլ.Պէ.Սի փողոցի վրա՝ Բեռլին Շենրեգում, «կինամոնակույն տոնը», Գեղեմանշտրասեցում անցիսնալ ուղիւրական կուսակցության մարզային կոմիտեի շենքը և, մանավանդ — ԿԱՐԼ Հիթին.Ելիս նախկին տունը՝ Բյուլովի հարապարակում: Այս տունը պետությունը զրավեց և տրամադրեց Գեստապոյի «կարիքների համար»: Այստեղ տանջանքների ելին յենթարկվում առաջին հերթին այն մարդիկ, ովքիր հայտնի ելին իրու Գերմանիայի կոմիտուակցության ակտիվիստների: Տանջանքների ամենազարհուրելի կամերները, այսպես կոչված «Նոլութիա նախօպում» ելին՝ Գեստապոյի շենքում՝ Պրինցիպրենցը առաջի վրա: Մարսափից մարդու մազերը բիշ-բիզ կանգնում են, յերբ լուսմ ես այդ զնդաններում յազաների պատմությունն, թե նրանք այնտեղ ինչեր են քաշել: Կալանավորների «մշակում» սովորաբար սկսվում երարքարոսական ծեծով: Զուհին գցում են սեղանի վրա և ծեծով ոստինե մահակերով, մորակներով, հրացանի ոռթերով և թոկերով: Ծեծը չի զադարում նույնիսկ այն ժամանակ, յերբ մակը պատառութում և արյունը հեղեղի պես հոսում եւ Հիմա «բարեկամված» մի յեղանակ և զործադրվում — թաղ սրբիով, վոլորած կեմով են ծեծում: Այս «կուլուռքական» յեղանակը զահիճներին հնարավորություն ետալիս գոհին խեղիւ, նրա ըոլոր ներքին որդանները վնասել առանց մարմնի վրա արտաքին վերքիը թողնելու, «առանց արյուն թափելու»:

Գրծադրություն են առ ուրիշ տեսակ խոշտանգումներ — կաշանագրին զնում են դադարի մեջ և հրամայում անշարժ պատկել:

Գլխավորելը մի անոնք եւ սմբացվում, վորից ջուրը զանդառ կաթում և պառկածի ճակատին: Տանջանքների նույն տեսակին

ե պատկանում մի այլ յեղանակ, վորը գործադրվում եր գլխավորապես կանանց գեմ, — զոհն ստիպված և ժամերով նստել աթոռուն, չարժվել Ամենաշնչին շարժում անելիս հարվածներ են տեղում նրա գլխին:

Ի՞նչ ե այդ, «ստորադրյալների» անկարգություն: Վոչ, այդ տրվում ե միանգամայն գիտակցարար, Գեստապոյի զեկավարների ցուցմունքներով: Դրա ապացույցներից մեկն այն փաստն է, վոր առավել տուժած միքանի զոհերի հենց ինքը՝ Գեստապոն տանում եր վոստիկանական հիվանդանոցը կամ Բեռլին-Մոռեբետի հնարքնական բանտին կից հիվանդանոցը:

Տանջողների հնարքամատությունը սահման չունի: Յես ականատեսներից այսպիսի մի փաստ եմ լսել:

Անօպասեկի կերպով ոի կոճի երերվում այն կամերան, ուր ավելի քան 10 բանտարկյալ կար: Այդ բանտարկյաներից մեկին բոնում և առաջարկում են, վոր նա հայտնի իր վերջին ցանկությունը կոճի մոտ կացինը ձեռքին կանգնած ե զարդը և այնպես ե ցուցյ տալիս, թե պատրաստվում ե կալանավորին զլխատել վերջինիս ստիպում են, վոր զլուխը զնի կոճին: Դասիճը բարձրացնում ե կացինը և զանդադի իջեցնում այնքան, մինչև վոր սառը պողպատը դիպչում ե զոհի ծոծրակին: Հանկարծ զահիճը վիր ե նետում կացինը, կարծես առանց կատակի պատրաստվելով այս անգամ կտրել զոհի զլուխը ... Նորից իջեցնում ե կացինը: Կալանավորները ստիպված են ականատես լինել այդ ժանր պատկերին, ամեն բոլես սպասելով, վոր իրոք պիտի կտրեն նրանց ընկերոջ զլուխը: Այս ամենը տանջանքի մի առանձին ձև է:

Գաղտնի վոստիկանությունը տանջանքների «նրբացած» մեթոդներ ե գործադրում մանավանդ Համբուրգում: Այստեղի բանտում մի սենյակ կա, վորի պատին փակցված ե լենինի լուսնկարը կալանավորին տանում են այդ պատի մոտ և հրամայում թքել նկարի վրա: Կալանավորը հրաժարվում ե և այսուհետեւ ընկնում «չոպերադնիք» տաք զոլորշիով լի մի շենք: Մի քանի ըստեւից հետո այստեղ փակված զոհն սկսում ե սրտի սաստիկ թուլություն զգալ Յեթե կաշանավորը չի զիմանում տանջանքին, մեռնում ե, նրա մերձագորներն այսպիսի լուր են ստանում: — «սրտի պայմանությունը մեռել եւ:

Ավելացրեք և այն, վոր սպանվածների հարազատները ծաղրանքի յենթարկվում: Այսպես, որինակ՝ Բեռլինում

Գեստապոյում կալանավոր Շտոյլտի հարազատներին ասել են, — «Չե՞ վոր հրաշալի բան ե իր գաղափարի համար սրտի պայթյունից մեռնելը»: Այս ամենը սոսկ մի մասնիկն եւ այն տանջանքների, վորոնց մասին պատմում են Գեստապոյի մարդկային սպանդանոցներում յեղած մարդիկ:

Ո՞Վ Ե ԳԼԽԱՎՈՐՈՒՄ ԳԵՍՏԱՊՈՆ

Գեստապո կոչվող արյունու զնդանի անմիջական պետք պահորդական ջոկատների համապետական զեկալիար՝ կատաղի ֆաշիստ Հիմլերն եւ Սակայն Գեստապոյի խզական ու գլխավոր զեկավարը գեներալ Հերման Գյորինդն եւ համագերմանական մինհստարը՝ ռայխստագի հրկիզումը կազմակերպողը: Թե դահճաներն ինչպես են վերաբերվում Գեստապոյի այդ զեկալիարին, այդ շեշտակի արտահայտել ե Զոնհնբուրդի ճամբարի հեծելավագներից մի բանդիտ: Մի անգամ նա գոտում ե կարանալորին ատրճանակով սպառնացող իր ընկերակցին: — «Կրակիր Գյորինդը մեզ կիրկի»:

1933 թվականի ընթացքում Հիմլերի տեղակալը, մինիստր ՌՈՒԴՈԼՖ ԳԵՍՍԸ յերկու գեկրետ հրատարակեց, վորոնցով արգելվում են կալանավորների խոշտանգումները: Սակայն ի՞նչ վերաբերմունք ելին ցույց տալիս Գեստապոյի դահճաները, յերբ կալանավորները խոշտանգումների ժամանակ հիշեցնում ելին այդ կարգադրությունների մասին: Դահճաները ցինիկ անկեղծությամբ հայտարարում ելին: — «Այդ դեկրետներն արտասահման տարածվելու համար են»: Սրանով նրանք հաստատեցին, վոր նման զեկրետների նպատակն ե արտասահմանում այնպիսի տպավորություն ստեղծել վոր իրը թե Գերմանիայի բանտերում խոշտանգումներ չեն թույլատրվում:

ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՅՔԸ

«Պետության թշնամիներին արմատախիլ անելու սիստեմի վերջին աստիճանը համակենտրոնացման ճամբարներն են: Դրանք վոչ այլ ինչ են, յեթև վոչ իսկական մահվան նաևբարենք: Այստեղ պահող մարդիկ մեռնում են ֆիզիկապես ու բարուապես: Շատերն ուղղակի սպանվում են: Մահվան ճամբարները սովորաբար գտնվում են հին տաժանավայրերի բանտերում, վորոնք հեռու յեն բնակավայրերից ու շրջապատված են բարձր պարփականությունում յեղած մարդիկ:

բաց թողնվում: Վոչ մի հառաջանք չի հասնում դրսի մանդկանց ականջին: Կալանավորների հարազատները միայն հազվագյուտ դեպքերում են տեսակցության թույլտվություն ստանում: Նամակագրությունն ամենախիստ հսկողության եւ յենթարկվում: Կալանավորները գանգատվելու իրավունք չունեն: Ճամբարները պարփակված են ու չեղոքացված ամբողջ աշխարհից: Անպաշտվան կալանավորները գտնվում են խոշտանգումների իշխանության տակ: Այս ճամբարներում մեռնում են վոչ միայն նրանք, ովքեր տանջանքների յեն յենթարկվում, այլև նրանք, ովքեր ստիպված են տեսնել իրենց ընկերների տանջանքները: Վոչ մի կալանավոր չի կարող վստահ լինել, թե ինքը հերթական զոհ չի դառնալու, թե կես ժամ հետո իրեն չեն կախի պատուհանի շրջանակից, վայր չեն գցի սանդուխքից կամ չեն գնդակահարի «փախչելու փորձ կատարելիս»:

Ճամբարների պարետությունները և վերակացուների խմբերն ամեն ինչ անում են կալանավորներին ծեծելու առիթուեղելու: Նրանք կանգ չեն առնում նաև ամենաչարամիտ պրովոկացիայի առաջ: Ահա մի որինակ Զոնհնենբուրգի ճամբարի կացությունից:

Ուժուուն կալանավոր տանող մի կամեր: Ժամապահը դռան վրա անսպասելի կերպով խորհրդացին աստղ ե տեսնում և կողքին՝ «Պ.Յ.» սկզբնատառեր: Ճամբարում լանդտագի նախկին կոմունիստ մի պատգամավոր կա: Այդ տառերը զուգագիպում են նրա անվան սկզբնատառերին: Այդ կամուրի բոլոր կալանավորների գեմ պատժիչ արշավախումբ ե կազմակերպվում «բայլե» վիկյան պրոպագանդ մղելու պատճառով: Իրեւ «խռովարաներ» նրանք շաբաթներով յենթարկվում են անսանելի խոշտանգումների: Միայն պատահականության շնորհիլ հաջողվում ե պարզել, վոր խորհրդացին աստղը նկարել են հենց իրենք, վերակացուները, վորպեսզի խոշտանգումների առիթ տան պարետությանը: Մի ուրիշ որինակ ճամբարի, այսպես կոչված՝ արևմբարյան բակում նորեկ բանտարկյաները «գաս առան»: Հետեւ վանքն այն յեղավ, վոր տասը հոգի տեղն ու տեղը վայր ընկան և հարկ յեղավ նրանց տանել: Հատուկ հանձնարարությունների զորամասերի մի խումբ այդպիսի «գաս ե տալիս» բարեկ կալանավորներիս: Գիտակցությունը կորցրած կալանավորներին տարան արեգելյան բակում գտնվող հիգանդանոցը:

Այդ ժամանակ հին կալանավորներն արևելյան բակում

աղատ ժամ եյին անցկացնում: Այն ըռպելին, յերբ նրանց մոռտով դահճաներն արևմայն բակից քարշ եյին տալիս վնասված ներին, հանկարծ լսվեց «յես մի ընկեր ունեցի» յերգը*): Այնտեղ յեղած վերակացուների խումբը չմիջամտեց: Բայց արևմտյան բակից մի մարդակեր իրեն զցեց արևելյան բակը և վերակացուներին հայտարարեց, իեւ այդ յերգն յերգելը խոռվության ակտ և հանդիսանում: Նրա կարծիքով այդ յերգն յերգելը նշանակում և ցույց կազմակերպել արևմտյան բակում իր կատարած «աշխատանքի» դեմ: Խմբի կարգադրությամբ յերգեցողությունն իսկույն դադարեց: Արևելյան բակում հավաքված կալանավորները զբկվեցին աղատ ժամից և ստիպված յեղան 45 րոպե անընդհատ վաղեր իրեւ պատիժ «խռովություն բաձրացնելու համար»:

Հետեվյալ առավոտյան՝ 1933 թվականի հուլիսի 17-ին պատիժը կրկնվեց: Ժամի շաբաթ արևելյան կորպուսը սկսեց «աշխատանքը»: Հատուկ հանձնարարությունների զորամասի վոստիկանական չինովնիկը կանգնեց բակի մեջտեղում և ամենից առաջ յերկարատև վազքի հրաման տվեց: Կալանավորները վաղելով 10 շրջան կատարեցին: Հետո տրիեցին նորանոր հրամաններ. — «Կանգնել . . .», «Պառկել . . .», «Դեպի պատը . . .», «Մարշ . . .», «Հանդարտ . . .»:

Կալանավորներն այդ բոլորին դիմանում եյին, սակայն 45 րոպեիցից հետո մի քանի հոգի վայր եյին ընկնում: Նրանք չեյին կա ողանում վեր կենալ:

Ելի կես ժամ, և արգին 20 հոգի ուշաթափ ընկած եյին հուլիսի արեւել տակ: Հիմանդանոցը հրաժարվում եր նրանց ընդունելու ըստ յերեւյթին պարետության հրամանով: Սակայն հատուկ հանձնարարությունների զորամասին պատկանող հրեշը զեր հանգիստ չեր տալիս կալանավորներին: Վայր ընկածներին հեռացրին վազքի ճանապարհից: Մյուսների հետ «զառը» շարու նակեցին:

Կալանավորները մտրդկային կերպարանքից ընկել եյին: Քրաինքը նրանց հազուսակից դորս ել տվիլ, յերեսից ծոր եր տալիս, խճճված մազերը կախված եյին աչքերի վրա: Վոմանք արդին խելքը կորցրածի պես եյին նայում:

Նորից ու նորից լսվում եր «Պանդնել . . .», «Պառկել . . .», «Դեպի պատը . . .», «Մարշ . . .», Մարշ . . .» հրամանը:

*) Գերմանական մի հին, զինվորական յերգի խոռվերը: Այդ յերգում զինվորը հրաժեշտ և տալիս կովում ընկած ընկերոջը:

Վերջապես յեկավ ինքը՝ պարետը: Լոռւթյունն հատու կհանձնարարությունների զորամասի չինովնիկը զեկուցում և իր հրամանատարին: Մոտի կանգնած բանտակյաները լսում են, թե նա ինչպես է հաղորդում, ցույց տալով զեսին ընկածներին: «Դիրանք ել չեն ուղում, խոռվություն են անում»:

Խոշտանգումը գաղարեցրին, բայց վորպես պատիժ «խռովության» համար, սահմանվեց տաժանակրական բանտերի ոեծիմ: զբուանքի ժամանակը կրծատվեց մինչև կես ժամի, քայլել կարելի յեր միայն առանձին-առանձին մեկը մյուսից 5 քայլ հեռու, առանց խոսիլու:

Այսպիսի մեթոդներով Զոննենբուրգի ճամբարում «խռովությունների» պատմություններ եյին սահղօվում: Այս մեթոդներն ամուր կերպով ամրացան Զոննենբուրգի մահվան ճամբարի սիստեմի մեջ:

«Յերե դուք փորձեք խռովություն բարձրացնել, յես առանց տատանվելու այս պատերը կնեւեկեզ ձեր արրուով այսպիսի խռովություններու կիմավորեց պարետ ՍԻԳԻԶՄՈՒՆԴԸ՝ հատուկ հանձնարարությունների զորամասի վոստիկանական լեյտենանտը կալանավորների խմբին, վոր Պոմերանիայի Կոլոնվ քաղաքից եյին տեղափոխել Զոննենբուրգի ճամբարը:

Նա պահնորդական ջոկատների հրահանդիչ եր, և 1933 թվականի ոգոստոսից ճամբարն այդ ջոկատների տնօրինության տակ եր զանգում: Այդ որից սկսած՝ ճամբարների պարետները համարվում են ներքին զորձերի մինիստրության լիազորները: Համակենտրոնացման ճամբարներում մասսայական խոշտանգումները սովորական յերեւյթ են դառնում:

Բացի մասսայական խոշտանգումներից, համակենտրոնացման ճամբարներում զուություն ունեն նաև ռանչատական դասներ», «Հարցաքննություններ», «արտակարգ հարցուքնություններ»: Դրա համար կան առանձին, հատկապես սարքավորված շենքեր: Վոչ մի կողմանակի մարդ չի կարող տեսնել թե այնտեղ ինչ է կատարվում: Հետքերը վոչնչացվում են: Կալանավորներին ստիպում են պատերը մաքրել մաշկի մնացորդներից ու արյունից, թափված տառմները, ակնոցների ջարդված աղակեները հավաքել և ալիս:

Զոննենբուրգի հիմանդանոցում այսպիսի մարդիկ եյին պառկած, վորոնց մեջն ու նատելատեղն ամբողջովին թարախակալած վերքերով ՀՀ ԵԱՀՆ պատմած: Յերե ճամբարի բժիշկը



